և ծառատնկովք · ԿՀ.—Եւ մի տուն 'ի քաղաքին Ցոպվէի, որ ցարդ ֆրանկի դուռն կոչի յօտարաց։

Իսկ աստուածասէր և բարեպաշտուհի համեստ տիկին Նորին Հեղինէ, դուստր Պոտուռեան Գէորգեայ, ոչինչ ընդհատ երեւեցաւ յառաքինական շաւիղս բարեգործ լծակցին իւրոյ 'ի կենդանութեան իւրում, տալով չինել մշանջենաւոր յիշատակ հոգւոց իւրեանց եւ նախնեացն 'ի տաճարն Ս. Յակոբայ մեծի Առաքելոյն, մարգարտայեռ և գոհարաշարդ եպիսկոպոսական պատուական թագն եւ վակասն, և մեծագին խաչն ձեռաց, և զայլ ձեռագործ աշխատութիւնս, այլովքն հանդերձ, որոց յիշատակքն և կտակք միշտ և հանապազ օրհնութեամբ եղիցին։

Ի սմին ժամանակի Քաղաքապետն կալաւ զերկուս Ֆէլլահս 'ի գեղջէ Ղազարոսի պատճառաւ իւիք և եդ 'ի բանտի, և 'ի գիշերին յայնմիկ գիւղականք նոցին քակեցին զորմն եկեղեցւոյն գերեզմանի Ս. Աստուածածնի 'ի ձորն Գեթսէմանի, և հանին անտի քարինս աւելի քան զ20 և խախտեցին 'ի տեղւոջէն զդուռն երկաթի, այլ ոչ մտին 'ի ներքս, և այնպէս մեկնեցան անտի · և ընդ առաւօտն եղեւ քննութիւն, և Քաղաքապետն խոստանայր տալ չինել զոր քակեցին Ֆէլլահք, այլ յայտ է թէ քանի ծանրանալ ունէր նա վանօրէից · նմին իրի տաղտկացեալ Պօղոսի յերեսաց այսպիսեաց ասէր՝ թէ ոչ է արժան կալ մնալ անդ՝ ուր իշխողք ոչ կարեն 'ի գործ դնել զօրինաւոր իշխանութիւնս իւրեանց։ Իսկ Փոխանորդ Զաքարիա վարդապետ զհետ պնդեալ էր սրտի մտօք լինիլ բաժանորդ ընդ Ցունաց 'ի Գողգոթայ 'ի տեղի Խաչելութեան Փրկչին, որոյ վասն խնդրէր յերուսաղէմ զդաշնագիրն Սալահատտինի, զի 'ի ժամանակս Նորին 'ի ձեռս Հայոց էր սրբավայրն այն · թէպէտ Պօղոս Եպիսկոպոս եցոյց նմա գիւրին ճանապարհ առանց այնր կատարել ըզգործն, զի Սրբոյն Մահմուտ ՌՅԲԹուին հրովարտակաւ բաժանորդութեամբ վայելել սահմանեալ էր զՍ. Տեղիս, այլ Զաքարիա յեցեալ 'ի բանս դաշնագրոյն՝ մատոյց գիր աղաչանաց առ Սրբոյ, և խնդրեաց տալ հրովարտակ հաւատար բաժանորդութեան Գողգոթայի տեղւոյն ընդ Ցունաց, և 'ի պատճառէ խմեալ բարկացեալ Սրբոյի հրամայ-